

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

թիվ 24

14 ՅՈՒՆԻՍ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար քառսուն դրո. եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ լ'էլի ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով:

ԶԵՆՈՒՄԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غاطه ده (ماسيس) غنيتى اداره سى

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դաւաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԱՅՐ, ԿԻՆ, ՏՂԱՅ

Մարդս տենդի հիւանդութենէ վերջը տկար կը մնայ, մանաւանդ տղայ մը: Թէպէտեւ հարկ չխոսնուի, հիւանդին պէտք է տալ



Հիշերու վրայ ասոր ուշա-
դրութիւնը ընել պէտք է:

18

SCOTT'S EMULSION

և տկարութիւնը անմիջապէս և վստահափար կը փարատէ
և կը տեսնուի որ

ԸՍԿՈԹԻ ԲԵՂԵՂԻՐՈՒԹՅՈՒՆ

մարմինը պատուր բոլոր տկարութիւններու դեմ
ամենամեծ դեղ է: Արեւական տակ ասոր հաւասար
բան մը չիկայ. այնպէս կատարեալ կը բժշկէ՝ որ կը
կարծուի թէ հիւանդութիւնը կուտէ ու կը կլլէ:

Բոլոր դեղագործները և դեղատոմսատէրը ինքնին:

Ա.ՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տե-
սակ դոնարեղէններ ունե-
նալ, աժան ու ճաշակա-
ւոր, թէ՛ արեւելեան եւ
թէ՛ եւրոպական ճաշակով
պատրաստուած, ժամա-
ցոյցներ, արծաթեայ զա-
ւաղաններ եւայլն, դիմե-
ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու-
կան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար
100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնո-
ղին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած
դոնարեղէնները եթէ մնասուած չեն՝ 100ին
10 զեղչով եւ կ'առնուին: Իսկ ապագայի զը-
նողներէն՝ 100ին 15 զեղչով:

Ա.ՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կըսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ
ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ
մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդ-
պէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն,
Ճապոնի եւ Սլլանէն ուղղակի բերել տուած
քարմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն,
համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ա-
մառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանիւն:

Կ. Պոլիս, Պահէ Գափու,
ձէլալ պէյ Լեան, թիւ 10:

Մասնաձեւեր Թուրքիոյ
զլխաւոր քաղաքներուն մէջ,
նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան զիմեւ կա-
մուրջին զուտը լրացրած Միսաք աղային:

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կառավարութեան ֆոնդըիին ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարիդի՝ Օբէրա, Վաւիլի, Նաւթթէ, Ամպիկիւ, Ֆուլի-Տրամաթիք եւայլն թաղաքները, նաեւ Պոնտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանզի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թաղաքները:

Պոն Մարչէն, Լուվրի վաճառատունները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէռի, Օթէլ ալ Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հաւլը-Մարսիլիա նաւարկութեան, Ծովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւններ:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կազմական Կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր եւմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիդի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ.— Պոլիս, Մահուտ փաշա, Պէօլիւք Երլտըզ խան, թիւ 14, Լա Դոնֆիւան պահովագր. ընկ. Գրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւն րիֆաի վաճառատուն մը, Պոլիս, Եռեկայ, Մուհաֆաղաճըլար, թիւ 46, առեւտարի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

ՀԱՐՈՆԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մեծ փողոց Բերայի թիւ 186

ՄԵԾ ԼԻՔԻՏԱՍԻՕՆ

ՀԱՐՈՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՍՆԵՐՈՒ ՄԵՏԱՌՄԵՂԷՆ
ՈՒ ԲԱՄՊԱԿԵՂԷՆ

Ք. ՆԱՌԱՄԻՐԱՆ ԵՒ ԸՆԿ. Վաճառատունը պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան եւ իր բաղմաթիւ յաճիրդներուն թէ մեծ քանակութեամբ շաքոնական կերպասեղէններ բերել տուած է, վերջին նորաձեւութեանց համաձայն, վայելուչ եւ տոկուն:

Այս կերպասեղէնները ցուցադրուած են շաքոնական վաճառատունը, Մեծ փողոց Բերայի, թ. 186, ուր այցելողները պիտի գնահատեն անոնց աւեսակին ընտրութիւնը ու ազնուութիւնը, միեւնոյն ատեն օգտուելով բացառիկ կերպով զեղչուած գիներէն, լիքիտասիօնի առթիւ:

1—4

ԼԻՔԻՏԱՍԻՕՆԸ ՊԻՏԻ ՏԵՒԷ

Յուճիս ԶԶԶԿԻ մինչեւ 2/15 Օգոստոս 1903

ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

— — —

Դաւթեան Դորձակալութիւնը որոշած ըլլալով նոր դարկ մը տալ հրատարակչական ճիւղին՝ հրաւէր կը կարդայ մեծարոյ հեղինակներուն որպէս զի իրենց գրական երկերը փութան ներկայացնել Դորձակալութեան:

Հրատարակելի գիրքերուն ձեռագիրը եւրեք օրինակ ըլլալու է՝ Մէարիֆի օրէնքով:

Դորձակալութիւնը կը ստանձնէ գիրքերու վաւերացման, տպագրութեան, փորձերու սրբագրութեան կազմի, եւ այլ աշխատութիւնները:

Կը կատարէ նաեւ տպագրական ամէն տեսակ գործեր, այցեւորման, շրջաբերական, նստակազուլիս, ազգեր, դպրոցական բաւերիչ, պատուանիչ, վիճակացոյց, վկայագիր, հաշուեգիր, եւ այլն եւ այլն:

Դիմել առ ՍՄԲԱՏ ԴԱԻԹԵԱՆ

Խորասանեան խան, Սիրեհնի, Կ. ՊՈԼԻՍ

1—5

ՄԱՍԻՍ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 24

14 ՅՈՒՆԻՍ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շանյամեանց, հայ քեհնօր. ԼԵՒՈՆ ԿԻՒՐԵՂԵԱՆ :—Բարիգեան հռամներ. «Մօռկ»ը. ԶԻՖ-
ԹԷ—ՍԱՐԱՖ :—Անբաժան սիրսեր (Բանաստեղծութիւն) ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ :—Թափա-
ռումներ (Գրական աշխարհէն) ՄԻՀՐ :—Շոգեկառփին սոյր (Բանաստեղծութիւն) Վ :—Լեզ-
ուաբնական. ՏԻԼԷԹԱՆԹ :—Բաժնուած սիրսեր (Ն. Մրցանակ՝ Ոսանաւորի մրցումից) Մ.
Կ. ՄԵՐԱՏՈՒՐԵԱՆ :—Ուրուագիծներ. «Սասկան վարդ» : ԳԱՄԵՐ :

ԾԱՅԼԱՄԵԱՆՑ, — ՀԱՅ ԹԵՆՈՒՐ

1880ին էր, ամառնային իրիկուն մը. նա-
ւը վերջին անգամ սուրեց և հեռացաւ Ու-
կեղջիւրի հրաշալի ծոցէն, ուր խուռն շար-
ուած կը ծփծփային նաւեր և առագաստա-
նաւեր : Երթեւեկ մը անվերջ, նաւակներու
և հեղասահ գայլքներու :

Անթիւ անտառ մը կայմերու և ծխնելոյզ-
ներու, արեւմուտքին ոսկեցնցող փողին մէջ
կորսուած, հորիզոնին հրավառ յատակին վը-
րայ ուրուականներու նման կը տատանէր
տարուբեր : Դարձանք Սարայ Պուռնուն :
Մինչ նաւը Մարմարայի ջուրերը կը պատէր
կ'անցնէր, Վոսիորի գեղազուարճ ալիւրուն
վրայ ամարանոցները՝ երթալով անորոշ՝ կը
կորսուէին մոխրագոյն մշուշի մէջ ծածկուելով :
Հեռուն, թատերաբեմի մը կողմանոցներուն
նման, Առնաւուտ գիւղի, Գանալիլի ծայ-
րերը և վերջապէս Հիսարի կլոր աշտարակ-
ներու ուրուագիծները կը նշարուէին պղզ-
տոր, որոնց ետեւէն մութը կը յառաջանար
սու ծովին խոնաւ շողիկն թեւերուն վրայ :

Ասդին՝ Իւսկիւտար վերջալոյսէն հրդեհի
բռնուած կարծեա, ճաճանչներ կ'արձակէր,
Պոսոյ կողմը, հսկայ չէնքեր վայելչօրէն կը
բարձրանային երկնից կապոյտը պատուելով,
ուր դեղին, նարնջի և մանուշակագոյն ժա-
պաւններ ամպերու շուրջը լանուած գմբեթ-

ներու ետին մոգական գոյներով կը բռնկէին :
Ճակաւ ամէն ինչ մոխրագոյն նուաղումներով
կը նուաղէր հորիզոնին վրայ, և տկար լոյ-
սեր, աղօտ ցոլքեր, կը պլպլային ծովին մէջ
օձապտոյտ գալարելով : Քանի կը հեռանա-
յինք, դիչերն ա'լ աւելի մօտէն իր սեւ վե-
րարկուն չորս բոլորը կը տարածէր :

Արեւմուտքի վերջածայրի հրավառութիւնը
ալ ևս լմնցած էր, միայն լուրթ կապոյտին
վրայ տակաւին բաց դեղին-կանաչ լոյսի
խուրճեր կը ճառագայթէին, իբր թէ հորի-
զոնին ետին վիթխարի երեկոտական լապտեր
մը ցոլացումներ արձակէր :

Գիւեր էր, մութ գիւեր. մինակ էի նա-
ւուն մէջ, այսինքն չունէի հայրենակից մը,
որու հետ կարող ըլլայի կիսել ծննդավայրէս
անջատումին թախիծը : Նաւերնիս Բիրէօն
կ'ուղեւորէր, ուր նաւ փոխելով Բալուօ
սիւսի երթայի և անկէ՝ Նարոլի ճամբով
Հռոմ :

Բիրէօն հասածիս պէս, առաջին մտածմուն-
քս եղաւ միւս նաւուն մէջ տեղափոխուիլ,
որ իողոյն սիւսի մեկնէր : Ճաշասրահին սան-
դուխներէն վար իջնալուս, առաջին տպաւո-
րութիւնս եղաւ երկու լայն ուսեր և մեծ
գլուխ մը որ ծռած ճերմակ թուղթերու վը-
րայ, չափ հաւանականաբար յուշատետրին

չարադրութեամբ կը զբաղէր: Եւրոպացիի չէր նմաներ. ընդհակառակը, արեւելեան թուխ դիմագծին մէջ, երկու սեւ աչքեր՝ թաւ յօնքերու միացած՝ կամարին ներքեւ կը վառէին:

— Ո՛վ է այս պարոնը, հարցուցի նոր սպասաւորիս որ՝ պայուսակս խցիկիս մէջ տեղաւորելէն կը դառնար: — Ռուս մըն է, պատասխանեց:

Այս բառին՝ օտարականը իմ վրայ դարձուց իր նայուածքը ուր կը ցոլար անուշ քաղցրութեան վառվռուն փայլ մը: Ենծի անծանօթ չէր թուեր այդ համակրելի դէմքը, այն պարթեւական կուրծքը, սեւազանդուր գլուխը, լայն ճակատը, կարմրայտ թուշերը և բերան մը փոքրիկ՝ սեւ պեխերու կէտր դարձուածքին տակ պահուելու: Հոգեբանական վայրկեանս, կռահեցինք կարծես, միեւնոյն սերունդէ սերած ըլլալնիս. ձա՛յն մը զմեզ թեւադրեց, ներշնչում մը անհասկընալի՝ զմեզ իրար մօտեցուց. այնպէս որ շատ բնականաբար, — Հա՛յ էք, հարցուց, կովկասեան հնչումով: — Այո՛, պատասխանեցի, և իր լայն ձեռքերուն մէջ իմ ձեռքերս կորսուեցան սերտ սեղմումի մը անկեղծ արտայայտութեամբ:

Շահլամեա՛նց — Կիւրեղեան, պատասխանեցի: Երրորդի մը բացակայութեան պատճառաւ ինքզինքնիս ներկայացուցինք մէկըդ մէկու:

Ա՛ն ատեն յիշեցի թէ Հիւանդանոցին տօնին տարեդարձին օրը զինքը տեսած էի և լսած իր գեղեցիկ ձայնը: Այո՛, Շահլամեանց, մեր ամէնուս ծանօթ և հայ համայնքին պատիւ բերող հայ-թէնոսը: Շահլամեա՛նցը. ըսել է, իմ ճանապարհորդութեան ընկերս պիտի ըլլար: Եւ ա՛յս կերպ, Միջերկրականի արկածալից Մաթաբանին ջուրերուն մէջ, մեր բարեկամութիւնը շղթայեցինք:

Ես ի՞նչ կրնայի իրեն պատմել, հաղիւ 19 տարուան շրջանաւարտ պատանի մը. ուստի ինքն սկսաւ իր 32 տարուան կեանքին եղելութիւնները պատմել և զիս ընդ միշտ իր մտերմութեան մէջ ընդունեցաւ իր բարեկամ: Թէ ի՞նչպէս ամուսնացած էր, նոյն խոկաւ կիւտէր, թէ հիմա Բեդրասուրկի կայսերական Երաժշտանոցին կողմէ ղրկուած, նա-

բոլի կ'երթար իր ձայնը մարզելու, ուր պիտի յաջողէր նաև իր նուագերգական ճաշակը մշակելու, իտալական ներդաշնակութեամբ:

Այսպէս, շարունակ երկու օր, Բիրէօնէն ինչուան Գաթանիա, երկու ապագայի բախտախնդիրները(*), ծովուն և երկնի անհուն կապոյտին մէջ կորսուած՝ կ'երազէին, իրենց ապառնի արուեստագիտական յոյսերուն ծրագիրները շինելով:

Ծովը իր սովորական մրրկաշունչ սպառնալիքները մոռցած, ձերմակ սաւանի մը նըման, խաղաղիկ լճի մը մակերեւոյթին կը նմանէր: Եւ այն անդնդախոր ջուրերուն թանձրութիւնը նաւին ցռուկը կը պատուէր կ'անցնէր, երկու կողմէն փոփոքի՝ ձերմակ հետք մը ձգելով, որ անկեան մը կողերուն բացուելուն նման կ'երկարէր, վէտ ի վէտ ալիքներու վրայ ծփծփուն, որոնք իրարու վըրայ հրուելով, գլորելով ուռուցիկ՝ կը հեռանային կը մարէին անհունութեան մէջ: Գաթանիա միասին դուրս ելանք, նոյնպէս Մաթինայի մէջ սլոոյտ մը ըրինք և անցանք համանուն նեղուցէն ուր ծովին ջուրը սաստիկ հովէն մերկուած փոփրած՝ անհամար ոչխարներու հօտի մը նմանութեամբ կը յառաջանայ կարծես, միշտ միեւնոյն տեղը մնալով:

Հասանք Բալեռօմ ուր վերատին նաւ փոխելով, սըընթաց Ելեքքիֆօ նաւով գիշերուան ժամանակ դէպ ի նէսպօլլիս մեկնեցանք:

Առաւօտը կանուխ, երկուքնիս ալ արշալոյսէն առաջ, տպաւորութեանց փափաքէն արթնցած՝ հորիզոնին վրայ ի դուր Վեսուֆի կոնաձև կատարը կը փնտռէինք: Ոչինչ: — Զերմակ-գորշագոյն շամանդաղ մը ծովն երկինքը իրար միացուցած էր: Արշալոյսին աղօտ լուսաւորութիւնը կը սկսէր տարածուիլ երկնից գմբեթին վրայ: Խոնաւ չոգիները կ'անօտարանային հեռանալով, մինչ լեռանց դադաթներուն ուրուագիծները կը սկսէին նըշ-

(*) Ծ. Խ, — Յօդուածագիրը՝ համեստութեան համար է անշուշտ որ բախտախնդիր բառը կը գործածէ, «ապագայ արուեստագէտներ» ըսել ուղեւով:

մարուիլ թափանցիկ կապոյտ բերեղեայ ապակիի մը մէջէն : Լսիկ բնութեան շարժումն մէջ շարժուն՝ միայն մեր հաւը և հեռուն շոճի նման կազային սեռութիւն մը դո՛ւրս կը մխար, որ պահ մը ծառի մը ձեւին կերպարանքը ստանալով, մէկ կողմէն ծայր մը կուտար, կ'երկարէր, կ'անօսարանար դէպի Սօսէնթօի հրուանդանին ուղղութեամբ : Վերջապէս Գարուի կղզին սկսաւ դժուիկ հորիզոնին վրայ. հեռուն Գապթելլամաւէի անաբուս քաղաքը խիտ կանանչութեան մէջ կը գունաւորուէր :

Շահլամեանց կը սքանչանար և անընդհատ կը նշանակէր իր ճանապարհորդութեան տըպաւորութիւնները :

Այս մտքի յափշտակութեան վայրկենին, յանկարծ ծովուն բաց կապոյտին վրայ ոսկեփայլ նեղ ժապուէն մը սկաւ խաղալ շողաւոր և փայլուն. խօլական պար մըն էր յաւերժաններու, որոնք ձերմակ փրփուրէն կը ծնէին դեղին շողերով՝ ձեռք ձեռքի տուած արեգական գալը աւետելով ընդ առաջ կ'երթային հրաշուրջ գնդակին, մինչ նա անտառին ծառերուն մէջէն կարմրաներկ կը բարձրանար ու կը ջերմացնէր առաւօտեան մթնոլորտը : Շողիները ուրուականներու նման փախուստ կուտային դէպ ի Գաղէթթայի լեռանց անտառներուն խորը ապաստանելով : Վեստֆի գագաթը ոսկեղօծ կը լուսաւորուէր մինչ իր ստորոտը ձերմակ՝ շողիներու մէջ թաղուած, ամպերէն դուրս իր մշտնջենական անարկու ծխամորճը կը մխար, մօւս մը՝ դոյնդոյն ամպերէն աւելի թանձր խտութեամբ, միշտ իր շոճի ձեւին վրայ արմատացած :

Կը քնանար Նաբոլի, խորճնկ քնով. մինչդեռ էլէքթրիֆօ կը մօտենար անոր նշանաւոր եղերքին որ հրաբխային սոսկալի հնօցին վրայ հիմնուած է : Միթէ ծերունի Վեստֆը չէ՞ր որ Պոմպէյի և Հէրքուլանում, հռոմայեցոց ամառանային զբօսավայրը լսականրու ժայթքումի և հրաբխային աւաղին տակ ոչնչացուց : Ո՞վ չէ կարդացած Les derniers jours de Pompey անգլիական վէպը, զոր վերջերս ֆրանսական ոստանին մէջ բնա-

կող հայադգի ծանօթ նկարիչ մը այնքան ճարտարութեամբ պատկերազարդած է :

Մաքսատան տաղտկացուցիչ ձեւակերպութիւններէն յետոյ, խնդիր մը որուն չի մասնակցեցաւ իմ նոր բարեկամս, լեղուն տեղեակ չըլլալուն համար, գայինք Սանթա Լուչիայի քարափին պանդոկներէն մէկը տեղաւորուելու : Սանթա Լուչիա, հին Նաբոլիդանական երգին վայրը, մեր մանկութենէն լսած և սորուած երգը, միշտ նոր, հաւատարմօրէն կը պատկերացնէ այդ հրաշագեղ ծոցին կեանքին պատկերը :

Գիշերուան լուսութեան մէջ կորսուած կիթառի մը կանտոցը սեռեմեքսի երգերուն կը հետեւի : Լսենք.

«Հեշտալիք Նաբոլի, երջանիկ երկիր, ներգաշնակութեան դրախտավայր. կ'ըսեն թէ Արարիչը քու ծոցիդ մէջ կը ժմտի, եկէ՛ք թեթեւ նաւակիս գոգը, գեփիւնին հետ քաղցրաշունչ, Սանթա Լուչիա, Սանթա Լուչիա :»

Երեք օր մնացի Շահլամեանցին հետ և բաժնուեցանք իրարմէ : Վերադարձի խոստումներով Հռոմ մեկնեցայ : Միւս տարի խոստումս յարգելով գարձայ Վեստֆին ստորոտը բնակող Կովկասցի բարեկամս դանալու : Այն լինչ անակընկալ. տանը մէջ մայրենի լեղուն շեշտերը կը լսուէին : Իր կինը Պագուին հեռաւորութիւնը կտրելով եկած էր ամուսնոյն պանդխտութեան ցաւերը ամօքելու. մանուկ մը դուարթուն աղաղակներով կը խաղար, այդ արեւելեան օձախին մէջ կեանք սփռելով : Սիրտս ուռեցաւ ուրախութեամբ վերօտին Շահլամեանցը տեսնալուն : Այլ որքան հսկայ յառաջդիմութիւն կատարած էր մէկ տարուան փոքր շրջանին մէջ : Արդէն ձանջցուած տեղւոյն երաժշտական ակումբներէն, արժանի գովեստներու արժանացած այդ նրբաճաշակ ժողովրդէն, որ այնքան դժուարահաճ է իր գնահատումներու մասին :

Շահլամեանց իր երգաձայնին (gamme) ելեւէջին ամբողջութիւնը հաւասարապէս ուժեղ ըլլալուն շնորհիւ կրցած էր հաճելի դառնալ այնպիսի միջավայրի մը մէջ, ուր շարունակ Սթանիօյի, Թամանիօյի, Մաուգօ-

նիի և Տէ Լուչիայի ձայներուն արձագանգները կը թնդան։ Ինչ զգլխիչ հոսանքներ մեղեդիներու, հեշտալուր սիրերգներու, օբեռաներու սքանչելի գոգոններուն դու ձայներու թնդիւններ։ Ինչ ժամանակներ, բարեկամս, և դուն կը յաղթանակէիր հո՛ն ուր միջակ կարողութիւններ չէին ժպրհիր ինքզինքնին հանդիսատեսաց քննադատութեան ենթարկել։

Երգեց ինծի Շահլամանց, Բաօլօ Թօսթիին սիրերգներէն, նուրբ և զգայուն. հազիւ իր պարթեւական կուրծքը կ'ուռէր, ուրկէ օդը կը մրմնջար անուշ թրթռումներով, և կամ երբոր խաղաղիկ *récitatif* ի մը քաղցրալուր միախառնութեան մէջ մոլորած ատենը յանկարծ սուր ձայն մը այգ ներդաշնակութեան խորէն կը բարձրացնէր, հոգիս ցնցելով, սարսուռ մը, որ մազերուս վրայէն կ'անցնէր անսովոր և անմահ։ Երգեց *Trovatore*էն, *Traviata*էն, *Donzette*ն, որը յիշեմ։ Ահա այնպէս էիր Շահլաման, երբ զքեզ ճանչցայ, դուարթ, առոյգ և կայտառ։ Հոռմ վերադառնալէս յետոյ իր յառաջդիմութեանց լուրերը լրագիրներէն կը տեղեկանայի, քանզի հազիւ հազ իրեն յատուկ *repertoire* մը պատրաստած, սկսաւ թատերաբեմերուն վրայ երգել։ Մալթա կղզւոյն մէջ հայ-թենոն ժողովուրդին բուռն ծափահարութիւնները և հիացումը քաղելով, դարձաւ Նաբոլի, ուր, աւանդ, անդառնալի կորուստ մը զինքը պիտի ջախջախէր։ Կինը մեռաւ. այն անուշ էակը, իր սրտին հատորը, հոգւոյն սէրը։ Խնդճ Շահլամանց, լացով եկաւ զիս Հոռմ գլուխալու և հուսկ բարեւ մը տալով առաւ իր տղաքը և Ռուսիա մեկնեցաւ։

Այն վայրկենէն ի վեր զինքը կորուսի։ Երկար ժամանակ իմ հետաքրքրութիւնս ալ իր հետ թափառեցաւ։

Ազնիւդ Շահլամանց, անկէ ի վեր արդեօք քանի՜ գեղարուեստական յաղթանակներու համաձայն միադուռ ինդաւլառ կեցցէներու արժանացար։ Քանի՜ կոյս սրտեր քու կոկորդիլ հիանալի գեղգեղին ներդաշնակութենէն գաղտնի տրոփեցին և քանի՜ մետաքս-

եայ թաշկինակներ դուրս երեւցան յուզուած աչքերու մարդրիտ կաթիլները չորցնելու։

Աւանդ, այս ինչ աղէտ է որ հասաւ զքեզ կըքեց, տապալեց, տնկողնի ծալքերուն մէջ կաշկանդեց։

Ո՛վ պիտի դուրցէր որ պիտի գար օր մը որ քու քաղցր նայուածքդ, ջղային դրդաւումներէն վատուեցած, ա՛լ չի պիտի տուար դիտել այն լոյսը, այն արեւածայրին ոսկեղոծ խօլական պարը, որ Նաբոլի առաւօտին, իր կախարդիչ հմայքով քեզ երազել կուտար։

Անհուն ցաւ մը կը ճնշէ հոգիս։ Այսպէ՛ս պիտի ըլլար ուրեմն մեր տունօք յօրինած գեղարուեստական երազներուն իրականութիւնը։

Արդեօք սիրտդ ինչպէս կ'արիւնի կըրդ քեզ ճերմակ սաւաններուն մէջ դատապարտուած կը տեսնաս և կը յիշես այն ժամանակները երբոր տեսարանին կողմանոցներէն դուրս կ'երեւայիր, ծիրաններով պճնազգեստ, թատրոնին դմբեթը թնդայնելու։

Այն բարեկամները, որոնք քու անարիւ վրայ ծուած, կը հսկեն շարունակ որպէս զի անուշ կեանքիդ թելը չի խզի անգթօրէն, քու այն մէկ քանի յստակ վայրկեաններուդ, իմ անուշադոնէ քու յիշողութեանդ մէջ արթնցնէին, քեզ յիշել տային այն վաղեմի մտերիմը, որ իր բոլոր սրտովը քեզ ապաքինում կը մաղթէ և շուտ վերադարձ թուտերաբեմի յաղթանակներուն, ուր նորանոր դափնիներ քեզ կը սպասեն։

Իցիւ թէ քու հեռաւոր բարեկամներուդ մաղթանքները և դուրգութեանքը բարեբար սպեղանի ըլլային այն հոգւոյդ՝ որ իր մահճին խորը օրէ օր կը հիւծի, կը հալի հոգեմաշ տառապանքով։

ԼՍԻՌՆ ԿԻՐԵՂՆԱՆ

Յովսէփ-Իզմիրեանց Գրական Յանձնաժողովը յառաջիկայ շարթու վերջնապէս պիտի որոշէ այն երկերը որոնց մրցանակ պիտի տրուի։ Հաւանական կը նկատուին Տ. Սմբատ վրդ. Սատեթեանի «Ներսէս Լամբրոնացի»ն և Խաչիկ Լեւոնեանի «Աղթամարայ կաթողիկոսներու պատմութիւնը»։

ԱՆՔԱԾԱՆ ՍՔԻՏԵՐ

ՕՐ. Ե. ԻՆ

Տեսականի նուրբ քեւերով ծիրանի,
Անկոտ հոգիս երբեմն անթաթ, անհամբեր,
Երջանկութեան սահմաններուն կը հասնի,
Գրգռմաներուն երազովը տարութեք:

Այդ ներամփոփ պահերուն մեջ օրօրուն,
Կը տեսնոյնք իդանքով վառ ու անեղ,
Բոլոր մաւութեւ, ոսկեփեշուր սեւերուն,
Ծիածանումն ունենալով հոգւոյս մեջ:

Ձե՛մ բաժնուիր եւ հոգիեդ սիրական,
Ինչպէս շուրբ որ կը վազէ ետեւեդ,
Իրեն անխոնջ դարպասովը խօսական:

Քեզ ամեն ժամ վայել կ'ուզեմ ակընդհ.
Առանց քեզի կարծես պիտի չապրի՛մ ալ,
Քերոջ սեւ մը որ չի գիտեր յափրանալ:

ՄԱՌԻ ԵՈՒԼԱՆՆԻՍԵԱՆ

ԲԱՐԻՁԵԱՆ ՏՈՒՍՆԵՐ

ՄՕՐԿԻՆ ՄԷՁ

ՏԻԿԻՆ ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԻՆ
Ա.

Ա՛լ բան չէր մնացած գրեթէ Բարիդի մէջ
որ տեսած չըլլայի: Շէնք, փողոց, պուլվար,
եկեղեցի, թանգարան, պարտէզ, գերեզման-
նոց, թատրոն, աշտարակ, անտառ և չրջա-
կաներ: Բան մը կար որ կը քաշէր զիս մազ-
նիսի պէս զոր սակայն տեսած չէի դեռ, հա-
կառակ անոր որ քիչ օրէն ա՛լ մեկնելու էի
պարտաւորուած: Մօրկը: Երեք անգամ մաս-
նաւորապէս ճամբայ ելայ հոն երթալու հա-
մար, երեք անգամուն ալ անցայ այդ ցած ու
մահատուեր չէնքին առջեւէն առանց ներս
մտնալ համարձակելու, առանց իսկ վայրկեան
մը կանգ առնելու. ընդհակառակը յանցա-
պարտի մը պէս խոյս տալով հոնկէ: Մօ՛րկ:
Տղայութեանս ատեն թերթօններու մէջ քիչ

կարդացեր էի անունը անոր, որ դժոխքի
մանրանկար մը կը թուէր ինձ ըլլալ: Միւս
կողմէ, ուղեգիրքս իրաւունք ունէր անշուշտ
յանձնարարելով որ չի տեսնամ դայն, եթէ
չէի ուղեր քունէս զրկուիլ ու մղձաւանջնե-
րով տառապիլ, քանի մը գիշերներ, մանա-
ւանդ որ ո եւ է յատկանշական ու մասնաւոր
արժանիք մը չէր ներկայացներ ան: Ու նոյն
իսկ, ժողովուրդին ձրի թատրոն մը երթալու
պէս մեծ ու պղտիկ, մանչ աղջիկ, ներս խու-
ժելը տեսնալս անգամ, ամենապղտիկ ուժ մը
չէր ներշնչէր ինձի և միշտ, միշտ կը փախ-
չէի հեռու, կրկնելով ինքնիրենս. «ա՛տ ալ
տեսած թող չըլլամ»: Սէնը՝ օճապտոյտ հոս
կուղար երկուքի ճեղքուելու և իր թեւերուն
մէջը սեղմելու անտէր դիակներու այդ յե-
տին ապաստանարանը, որուն ինք կը բերէր
կը հայթայթէր մեռելներու մեծկակ պաշար
մը և քիչ մը անդին Նօթր-Տամ՝ անհուն խո-
րանի մը պէս կը ցցուէր, իր հովանիին տակ
առնելով կարծես լքուած ու անպաշտպան
հէք այդ մարմինը, բազկատարած իր երեւոյ-
թով աղօթելով անոնց հոգիին համար ու
օրհնութիւններ ցանցնելով անոնց վրայ, այդ
բոլոր սեւութիւնները ու արամութիւնները
հակասող հրաշափառ, կեանքոտ ու լուսապայ-
ծառ արեւի մը շողերուն տակ:

Ռիւ տը Բրօվանս կը ընակիմ, սիրուն
բանսիօնի մը մէջ: Դիւերը թատրոնէն վերջը,
բարեկամներով ու վարձկան բարեկամուհի-
ներով ասդին անդին սլքստացեր և շատ ուշ
եւեկեր պառկելու, անսնկ որ հետեւեալ
առաւոռն կէս օրը անցած էր երբոր արթնցայ:
Ժամը մէկէն առաջ չէինք ճաշեր արդէն:
Անմիջապէս, ըստ սովորութեան, երեսս իսկ
չի լուացած, պատուհանիս փեղկերը կը բա-
նամ, սենեակս լուսաւորելու համար և օր-
ուան ընելիք օդին վրայ դադափար մը ու-
նենալու համար երկինքը կը հարցուիրո՞ճեմ:
Այնքան փոփոխական են հոս օդերը, ապրիլ
ամսուան մէջ մանաւանդ. բայց ոչ երկինք ոչ
ալ ամպերը կը գրաւեն ուշադրութիւնս և
յանկարծ կը տեսնամ հետզհետէ ստուարացող
բաղմութիւն մը որ կը խռնուի մեր դէմը
գտնուող պանդուկի մը դրան առջեւ ուր պաշ-

տօնականներ, պաշտօնական անձեր, օտարներ մեծ իրարանցումով կը մտնան կեղևն: Ոճիր մը պատահած ըլլալու է նորէն. չատ սովորական բան մը հոս: Պատուհանս կը դոյցեմ: Եւ ճաշէն անմիջապէս ետքը կը մեկնիմ առահէն, մեծ դժուարութիւնով ճամբայ բանալով դիզուած հետաքրքիրներու մէջէն: Ամենէն այլանդակ ու իրար չի բռնած դրոյցները չըրջան կ'ընեն ամբողջին մէջէն, որոնց առանց ականջ կախելու կանցնիմ կերթամ: Հետեւեալ առտու միայն, լրագիրիս առաջին էջին մէջ կը կարդամ սիրային տուամի մը հետեւեալ նկարագրականը, փղձկող այնչափ որչափ ահարկու:

Բ.

Սարսափելի եղերերդութիւն մը, տխուր վերջաբան՝ ամուսնական անհաւատարմութեան մը, տեղի ունեցաւ երէկ առտու, Շօսէ Տ'Անթէն թաղին շատ շնորհքով մէկ օթէլին մէջ. թ. 53, Ռիւ աը Բրօլմանս, քիչ հեռու Երրորդութեան եկեղեցիէն:

Օթէլ տ'Ամերիկի ծառան, առջի գիշերը առտուան մէկին տանները քունէն ընդոստ արթնցած էր զանգակի ուժղին հարուածով մը որուն հետեւած էր երկրորդ հարուած մը, առաջինէն ոչ նուազ սաստիկ: Անմիջապէս փութաց դուռը բանալ գիշերային այդ այցելուներուն որոնք ներս մտան ուղղակի դէպ ի գրասենեակը պահդոկին ուր ծառան հանգիստ մը կըրցաւ դիտել զիրենք: Մէկը քսան տարու, կտրիճ մըն էր, խոշոր, առուգագեղ, թուխ, կանոնաւոր դիմագծութիւնով, գլուխը շաղանակադոյն գլխարկ մը, մութ դոյն հագուաներ և դեղին, կոճակով ու շատ ճաշակաւոր կօշիկներ հագած: Կինը շատ աւելի տալուօք, թէեւ միշտ գեղեցիկ իր նորաձեւօրէն յարդարուած թուխ մազերով, յոգնած դէմք մը ունէր, աչքերը կիսափակ: Գլուխը կապոյտ ծաղիկներով յարդէ գլխարկ մը, վերան ժանեկադարձ Երբքա մը առած և իր գորշ ասուիէ չըջագեցտին տակէն կը նըմարուէին նմանապէս դեղին կաշիէ, ամառուան սիրուն կօշիկներ:

— Մհ, ասկալի բան է աս, ըսաւ երիտասարդը կառնօնին որ նայուածքով բացատրու-

թիւն կուղէր կարծես: Բարիդէն դուրս կը ընակինք մենք, և ահա ձախորդ պարադայի մը հանդիպեցանք: Վերջին կառախումբը փախցուցինք և զիշերով ստիպուեցանք Բարիդ մնալ: Հանդիստ ու աղուոր սենեակ մը կ'ուղենք:

Բայց նախ պէտք եղաւ արձանագրութեանց պաշտօնական տեսարակի ձեւակերպութիւնները կատարել և երբ իրմէն իր ինքնուրուի հաստատող թուղթեր ուղուեցան, երիտասարդը, վարանոտ ձեռքով մը երկընցուց ինքնութեան քառթ մը զոր առած էր Ֆրանսական հեծանիւի քիւպէն և ուր իր անունը ու հասցէն կային նշանակուած. Բօլ Կիյեու, քսան տարու, պաշտօնայ բարիդեան փոխադրական կարեւոր ընկերութեան մը մէջ:

Առտուն ժամը տասնութէկէն քիչ առաջ, զիշերուան երկու ճամբորդներուն բռնած սենեակին ելեքարական զանգակը զարնուեցաւ: Եւ անմիջապէս օթէլին պաշտօնեաներէն մէկը, Պ. Ճէյմս, վեր վաղեց, իմանալու համար թէ ի՞նչ հրաման ունէին: Բայց դուռը հազիւ թէ կիսովին բացուեցաւ, ուրկից Պ. Կիյեու հանգարտ երեւոյթով մը գլուխը դուրս հանեց և ըսաւ.

— Հաճեցէք թէյ մը բերել ինծի, և կաթ՝ Տիկինին համար:

Բաւորդ մը վերջը Պ. Ճէյմս բերաւ ուղուած նախաճաշիկը և Պ. Կիյեու առանց թող տալու որ սենեակէն ներս մտնայ ան, առաւ փսէն անոր ձեռքէն և դուռը նորէն կղպեց ներսէն երկու անգամ:

Եւ սակայն ոչ ոքի միտքէն կ'անցնէր այն ահուելի տուամը որ կը պատրաստուէր այդ սենեակին չորս պատերուն ետին:

Կէս—օրին, Պ. Ճէյմս նորէն վեր ելած էր և կը փոխէր ձեռքակաշկները ուրիշ սենեակի մը որ նոյն առտուն իսկ էր պարպուած, երբ իր ուշադրութիւնը դրաւեցին ողբանման հեծիւներ, հակամարդկային աղաղակներ: Շուտով վար իջաւ օթէլին գրասենեակը, բարձրոնին իմաց տալու համար, բայց ան ալ հոն չէր: Այն տունն Պ. Ճէյմս սպասաւոր աղեկի մը հետ նորէն վեր ելաւ:

— Հո՞ս նայէ, ըսաւ անոր, սա սենեակին

մէջ հոգեւարքի ձայներ կ'ելլան կոր, վկայ եղիր որ, եթէ դուռը պիտի կոտրեմ հիմա, իրենց օգնութեան հասնելու դուս մարդասիրական նպատակով է:

Ատոր վրայ, Պ. ձէյմա դուռը խորտակեց, ինչ որ աւելի քան հինգ երկար վայրկեաններ տեւեց և սակայն, քաջարի ծառան ետ նետուեցաւ անմիջապէս, սոսկումով համակուած:

Սենեակին մէջտեղը, տախտակամածին վրայ դիրկ գիրկի նստած, երկու ճամբորդները անուշիւրէն տոգոյն, փրփրաշուրթն, քիթերնին պիղկ, աչքերնին՝ խոր մոլոր ու սոսկալի կերպով գալարուելով մեռնելու վրայ էին: Նախ, երիտասարդը մեռաւ փորը սեղմելով, յուսահատութեան ու ոգեւարի յետին շարժման մը մէջ: Շատ չանցած կինն ալ փչեց վերջին շունչը, գլուխը երկու ձեռքերուն մէջը առած, խենթութեան վերջին նուագի մը մէջ կցկտուր բառեր գուրցելով:

Պ. ձէյմա շուտով մօտակայ բժիշկներէն մէկը կանչել տուաւ որ սեղանին վրայ, բացը դրուած հեղուկի շիշը ձեռքը առնելուն պէս պօռայ:

— Սիւնիւր ք բօքասով ինքզինքնին են թունաւորեր, սա թշուա՛ռները:

Եւ իրաւոյնէ, մահն ալ՝ դժնդակ մահը իր դործը շուտով ու ամբողջովին գլուխ հանած էր: Ամէն խնամք անօգուտ էր: Կինը իր թէյին հետ կլլած էր սարսափելի թոյնը, մարդը՝ շուրի գաւաթով մը:

Քանի մը վայրկեան ետքը, թաղին ոստիկանական քովսէրը իր քարտուղարին ու պաշտօնական բժիշկին հետ եկաւ, օրինական տխուր քննութիւնը կատարելու և ողբերգութեան պատճառները մէջտեղ հանելու համար:

Ինքզինքնին մեռցնելէ առաջ, երկու յուսահատները կարգ մը թուղթեր դրած էին սեղանին վրայ, որոնց մէջ մասնաւորապէս նամակ մը՝ ուղղուած Պ. Սէվէլին, պանդոկապետ Ռիւ տէ դ'Աքասիա, թ. 16. Քարթիէ տէ Թէյն:

Պ. Սէվէլ, անմիջապէս կանչուելով, շուտ մը ճանչցաւ երկու զխաղները՝ ըսելով որ ա-

տոնք իրենց ողջութեանը իր վարձակալները եղած էին, մինչեւ այս վերջին օրերը:

— Այս զոյգը, ըսաւ Պ. Սէվէլ, մարտ 7ին եկաւ ինծի, երիտասարդը որ ինքզինքը Բօլ Տօրիա կը յորջորջէր, Օրանէն եկած՝ հեծանուորդ, և կինը՝ Իվօն Ժէրառ՝ նմանապէս Օրանէն կուգար ուր, կ'ըսէր, ընտանեկան անխորժ խնդիրներ էր ունեցած: Գրեթէ բան մը չէին ըներ ամբողջ օրը: Կինը տունը կը մնար միշտ, մինչդեռ մարդը շատ անգամներ դուրս կ'ելլար: Երբ կը հարցնէին իրեն, երիտասարդը կը պատասխանէր:

— Հեծանիւի վաճառատուն մը կը փնտռեմ կոր, մտնալու համար: Սիրով պիտի յօժարէի մրցիլ բարիգեան վէլօսրօմներուն մէջ:

— Երէկ չէ առջի օրը, ըսաւ Պ. Սէվէլ, հեծանիւի ինքնակոչ մրցողը իմ հեծանիւս փոխ առաւ, ստիպողական գործի մը երթալու համար Ռիւ տը լա Ֆօլի-Ռէնեօլ: Քանի մը ժամ վերջն ալ կնիկը կծիկը կը դնէր և անկից ի վեր հիմա կը տեսնամ կոր վարձակալներուս տեղ, աս անձանաչ զխաղները:

Երիտասարդը դրամապանակին մէջ ունէր տակաւին տասը ֆրանքսոց մը: Տարակոյս չիկայ որ մարդուն հեծանիւը ծախեր են, իրենց սոսկալի ծրագիրը վայելուչ տեղ մը ի գործ դնելու համար:

Երկու սիրահարներուն բռնած մէկ օրագիրին շնորհիւն էր որ իրենց ճշմարիտ անունները գանուեցան, ինչու որ դէպ ի մահ իրենց քայլափոխներուն մէջ, օրը օրին նօթած էին իրենց վերջին տպաւորութիւնները:

Ահաւասիկ քանի մը հատուածներ.

«Բօլ և Մարի ա'լ ձանձրացան կեանքէն: Կը փափաքին միասին այրուիլ գերեզմանատան փուռին մէջ:

«Երբ մեռնելու մօտ է մարդ, սուտ չի խօսիր—գրած էր կինը: Էրիկս ու ընտանիքս տակէն մտան վրայէն ելան հարստութեանս: Բնաւ չեմ գղջար մեռնելուս: Միակ ցաւս ան է որ զաւակներս չեմ կրնար կոր հետս տանիլ:

«Ապրի՛ Սէրը: Վա'ր անցնի այն կեանքը որ բանի մը չի ծառայէր և երբ անպարկեշտ անձերու հետ գործ կ'ուսենայ մարդ»:

ԱՅՈՐ. ԲՕԼ ԵՒ ՄԱՐԻ

Եւ քիչ անդին .

«Մենք երկուքս ալ երկինքին մէջ պիտի բնակինք, երբ վերջապէս մեռած ըլլանք : Հուսկ ողջոյնս կուտամ ծնողքիս ու զաւակներուս՝ զորս կը ցաւիմ որ չի կրցայ տանիլ ինծի հետ գերեզման, որովհետեւ հիմա անոնց պիտի սորվեցնեն սոսկալ իրենց մօրմէն ու ատել զայն» :

ՄԱՐԻ

Այս կսկծալի քննութենէն կարելի եղաւ հասկնալ որ այդ կինը կարգուած էր Բարիզի արեւմտեան արուարձաններէն մէկուն մէջ խիստ ծանօթ անձնաւորութեան մը հետ : Հինգ զաւակ կը թողու, ութը տարուէն մինչեւ տասնըվեց ամսու :

Իրիկուան ժամը վեցին, երկու դիակներու տէրերը եկած և պահանջած չըլլալով զանոնք, Մօրկ խրկուեցան :

Գ .

Լրագիրս կը ծալւեմ և շուռչա չիտակ Մօրկ կ'առնեմ : Աս անգամ, չէ՛, ինչ կուղէ թող ըլլայ, թէ՛ զայն տեսած պիտի ըլլամ և թէ՛ այդ երկու վտեմ խենթերը որոնք երկինքին մէջ բնակելու յաւակնութիւնով մեկնեցան ասկէց : Մեռնելու համար մէկ դիչեր մը միայն եկած էին զրացնութիւն ընել ինծի : Եւ հիմա տեսակ մը յուզարկաւորի պէս կը փութայի ետեւսուն, վախնալով որ ուշ կը մնամ :

Արտասովոր բաղմութիւն մը խռնուած է ներսը և անընդհատ մտնող ելլող կայ : Անցնողը մէյ մը ներս կը մտնայ կոր, միւս կողմէն դուրս ելլալու համար : Կին մը երեք զաւակներով, կ'աճապարէ, իբր թէ եկեղեցի մանար : Ետեւէն ալ ես : Երկու քարէ աստիճաններ կ'ելլամ : Ճակատը մութդոյն ներկուած տախտակէ լայն միջնորմ մը որուն վրայ անծանօթ մեռելներու բազմաթիւ պատկերներ, զանազան ձեւերով ու մանրամասնութիւններով, որոնց համար տեղեկութիւն կուզուի :

Միջնորմին քովէն կը դառնամ, նեղութիւնով ճամբայ կը բանամ բաղմութիւնը ձեղքելով և կը համիմ ապակեփակ ահագին բեմի մը առջեւ, ճիշդ ինչպէս մեծ վաճառատուններու անսահման վիքթրիաները՝ անտիճան աստիճան յարգարուած :

Տեսարանը անմոռանալիօրէն, ահուելիօրէն, սարսուալի է :

Ամիթիթատրոնաձեւ շարք շարք մեռելներ կ'երկնան, մինչեւ կողորդնին սեւ պատանքներու մէջ առնուած, որոնցմէ գլուխնին միայն ժանտատեսիլ, քստմեկի՞ մահաբոյր կը ցցուին դուրս, զանազան ձեւերով : Ճերմակ թուանշաններ կը դասակարգեն զանոնք : Էն վարը կին մը, ճերմկոտած ու թնձուկցած մազերը խառնխուռն, որուն ճերմակ ու մանր ակունքներ իրար կը սխմեն ու կիսաբուլբուլ մը կը կազմեն, առանց չթուկնքի բերանին առջեւ, զոր ձուկերը կերեր են Սէնի մէջ : Անոր քովը՝ դեղին պէսերով երիտասարդ մը, աչքերը բաց՝ ինծի կը նայի այն աստիճան կենդանի ու բնական նայուածքով մը որ հոն տեղի պահապանը կը կարծեմ : Այնչափ ծանօթ դէմք մը ունի որ դեռ երէկ տեսած ըլլալ կը կարծես : Անոր գլուխին վերեւ, հինգ տարու անտէր որբուհի մը գլխաւը, թերեւս անօթութենէն մեռած և փողոցի մը անկիւնը աղտեղութիւններու մէջէն զրուսուած : Անճանաչ, լղճուած գլուխ մը որ ոչինչ ունի մարդկային : Անոր քովը խոր ծերունի մը որ հակառակ այնչափ տարի ապրած ըլլալուն ու թերեւս թոռներու տէր ըլլալուն, անծանօթ ու անտէր մեկնած է աս աշխարհէն : Ուրիշ մը որ փողոցի մը մէջ գիչերով սղաննուած և կողոպտուած է, անդինը արկածի դո՛, զոր ոչ ոք եկած է վնասելու ու յուզարկաւորութիւն մը նուիրելու իր յիշատակին : Եւ դեռ ուրիշներ :

Օ՛հ, ահաւասիկ վերջապէս երկու սիրախեւերը : Երիտասարդը ու կինը քով քովի են միշտ, և թերեւս ատոր համար իսկ գոհունակ երեւոյթ մը ունին, հակառակ Մօրկի մէջ ըլլալուն՝ փոխանակ Երկինքի : Ազգականները շատոնց զատած կ'ըլլային զիրենք հիմա, եթէ եկած և պահանջած ըլլային անոնց մարմինները : Բայց որո՞հ հոգ : Չէ՞մի որ իրենց հոգիները հոն Երկինքին մէջ միասին պիտի բնակին : Վաղը փուռին մէջ միասին պիտի խորովին, գեհեհային ջերմութեան մը մէջ որ ինչ չափ ալ աղեկէզ ըլլայ՝ սիրոյ կը բակէն աւելի սաստիկ չէ՛ և իրենց մոխիրները

իրար պիտի խառնուին միեւնոյն սափորին
մէջ: Երկուքին ալ դիմագիծերը շտկուած են
հիմա և հանդարտ արտայայտութիւն մը ու-
նին ողեւարի բուռն պայքարներէն ու ձգտում-
ներէն ետքը: Երկուքն ալ սուտ մեռելներու
երեւոյթը ունին և եթէ Մօրկի մէջ չըլլայի՝
ընաւ պիտի չուզէի հաւատալ անոնց անշն-
չացած ըլլալուն: Ընդհակառակը, երանու-
թեան նուրբ ճառագայթում մը կայ դեռատի
սիրահարին դէմքին վրայ որ իր քսան ան-
փորձ գարուններուն բուսնադակ թափովը
նետուած սիրային անգարմանելի խենթու-
թեան մը մէջ, կը բացագանչէ կարծես.

—Ապրի՛ սէրը:

Մինչդեռ տարւօք բայց միշտ գեղանի
կնկան լուրջ ու տարտամ դիմագիծերէն կը
ժայթքէ, աշխարհը ճանչցող ու փորձառու
կնկան և սէրը շատ ուշ ճաշակողի բոլոր
դառնութիւնը որ կարծես կը յամառի կրկնել
լալադին:

—Վա՛ր անցնի Կեանքը:


Դուրսը, Մէն՝ օձապտոյտ, կուգայ երկու-
քի ձեղքուելու և իր թեւերուն մէջը սեղ-
մելու անտէր դիակներու յետին այդ ապաս-
տանարանը, որուն ինք կը բերէ կը հայթայ-
թէ մեռելներու մեծկակ պաշար մը, և քիչ
մը անդին, Նօթր-Տամ անհուն խորանի մը
պէս կը ցցուի, իր հովանիին տակ առնելով
կարծես լքուած ու անպաշտպան հէք այդ
մարմինները, բազկամբարձ իր երեւոյթով
ազօթելով անոնց հոգիներուն համար ու օրհ-
նութիւններ ցանցընելով անոնց վրայ...

ՉԻՖԹԷ—ՍՍՐԱՖ.

Բարիզ, 28 Ապրիլ 903

Ռուսահայ միլիտնատէր Պ. Առաքէլ Ծա-
տուրեանցի անձնասպանութեան լուրը, որ
հասաւ չարթուս սկիւղը, խորին յուզում
պատճառեց Պոլսոյ հայ համայնքին ալ որ հե-
ռուէն՝ անուշով կը ճանչնար այդ բարերար
անձնաւորութիւնը: Պ. Ծատուրեանց 75 տա-
րեկան ծերունի մըն էր և կրթական, եկե-
ղեցական ու մարդասիրական հաստատու-
թեանց իր ըրած նպատակները անհաշուելի
էին: Իր անձնասպանութեան չարժապէթը կը
վերադրուի գործերուն անյաջողութեանը:

Գ Ա Յ Ն Ո Ւ Ա Ս Ս Բ Տ Ե Բ



(Ե. ՄՐՅՕ.ՆԱ.)

Հեւհաս շունչեր կու գան ման,
Ու հրեհուանով կը ժրպփնք.
Կ'երկենեմ կապոյս մ'աննրման
Բիլ ծովն անհուն ու երկինք:

Եւ բուրումներ կու գան ման,
Ոգեւորում մը հեշտին
Արբորանով մը յուզման,
Կ'ամոհե վեհը վրէժին:

Հոգիս ունի խինդի այգուն,
Ու դալալը բըռնունքին.
Սիրքս քնար մ'ե անհուն
Որուն երգեր ցաւ չունին:

* *

Երագի մը պէս գացին
Տարիները սահեցան
Այն օրէն՝ երբ բզգացին
Սիրքեր ցունցը բաժանման:

Երբեմն արցունք մը ցաւի,
Զիս վրդովեց խրոպով.
Երբեմն ալ յօյս մը ծաւի
Շողաց հոգւոյս մութին քով:

Բաժանումէն վերջ, իբա՛ւ,
Ինչ գորովով, ինչ խանդով
Կր փառին սիրքեր, ծաւալ
Միացումին հեշտանով:

* *

Երագանքներ զիս կ'օրրեն
Օրորումով մը հանգարս.
Հեռուն լեւնէն, ձորեհէն,
Միշտ կը յառիմ ես անքաւրք,

Ծածանումիդ մօտալուս
Յոյսերովը մոլորուն,
Տենդով կը սպասեմ գալուդ,
Յընձումին մէջ երգերուն:

Այ սիրս ունի խինդն այգուն,
Ու դալալը բըռնունքին.
Հոգիս քնար մ'ե անհուն
Որուն երգեր ցաւ չունին:

ՄԻՍԱԿ Կ. ՄԵՆՍՏՈՐԵԱՆ ԴԻՍՆԱՆ

Կ. Պոլիս

ԼԵԶՈՒԱՔՆՆԱԿԱՆ^(*)

ԱՌ Պ. ԳՈՒՐԳԵՆ

Կարդացի ձեր ժամանցի պատասխանը, հաւատացէ՛ք որ նշանաւոր չէր: Այդ ո՞րքան մեծախօսութեան լավաներ գուրս կը ժայթքեն ձեր գրչածայրէն՝ որ բթացած և հաստացած այլ ևս, փոխուելու պէտքը կը զգայ: Իմ ծածկանունիս համակրեր էք. կը տեսնուի, շնորհակալ եմ, բայց պախարակելին այն է որ բռնաբարելու կ'ելլաք դիմակիս ծայրը: Ինչո՞ւ լեզուագիտական խնդրոյ մը առթիւ անձնական յատկութեանց պուտուկը այդպէս թեթեւօրէն կը խուղարկէք: Ես խաղերէն կամ ֆրանսերէն կրնամ գիտնալ, առո՞նք իմ գիտութեանս պարկին պաշարներն են, աւելի լաւ կ'ըլլար որ ջանայիք ձեր միակ պարկը լեցնելու, որ շատ ծանր ըլլալու չէ. դո՞նէ այսպէս է տպաւորութիւնը ձեր գրութիւնները կարգացողին: Իմ գրելակերպիս չէք հաւնիր—կարելի է: Երբեք այդ մասին յաւակնութիւն չեմ ունեցած:

Ձեր սիրեցեալ Տիլէթանթը շատ փափկանդկատ դանուեցաւ երբ դուք իրեն գրական քննադատութեան մը բաժակը ներկայացուցիք: Ես, ընդունարանին բիւրեղեայ կամ պարզ ապակեայ ըլլալուն չըզբաղելով, անոր պարունակութիւնը առաւ, ուշի ուշով քննեց, չափեց և պատճառաբանեց որ Պ. Գուրգէն—ես ալ Պ. կը գործածեմ,—իր թարգմանիչ երկրորդական կարգի կարողութիւն մ'է և երբ վարպետներու դէմ ընդդիմամարտ կանգնի, կը սխալի իր անոյեանին ընտրութեանը մէջ:

Ո՞ւր մնաց Իկարէյին խոյանալը:—Յուսախաբութիւն:

Դուք որ հայկաբանութեան եթերին բարձունքը սաւառնիլ կը ճգնիք, ա՛յս կերպ ուրեմն պէտք էիք հերքել իմ քննադատու-

(*) Ծ. Խ.—Առաջին ու վերջին անգամ ըլլալով՝ քանի մը էջ կը նուիրենք լեզուաբանական ծանօթ վէճին, հրատարակելով Տիլէթանթի պատասխանը՝ Ճառակ Ոսկեղէն դպրութեան հեղինակին:

թիւններս, որոնք ամէնքն ալ ճիշդ և ուղղամտութեամբ յորինուած են և լոկ ինձմէ և ոչ թէ թեւադրեալ ձեր մէկ երեւակայած վարժապետէն, որուն գլխէն իմինէս աւելի դարուն անցած չէ՝ տակաւին:

Ափսո՛ս, ա՛յս էր ուրեմն քառասնօրեայ աղետարչ երկունքի ցաւերու արդիւնքը, այն փեականական ֆանի մը դիսողութիւններ որոնք անցեալ հինգշաբթի^(*) օր Լոյս տեսան, չոր ու ցամաք, խեղճ ու կրակ, զո՛ւրկ որ եւ է ընդդիմակացութեան ասպետական հովէ, խրոխտանք մը անվերջ և անտի, հերքում մը՝ ուր կը նշմարուի պարսաւաւոր գրչի մը յամառ ոգին, զրիչ մը շատ սովորական, հրահանգներու շիւղադէտ սրբաբուրութեամբ ժանդոտած, որ չի գիտեր սաւառնիլ, այլ հողին երեսը քերելով կ'անցնի լորամարդիին գետնաթուի թռիչովը, հաւասար, միօրինակ, տաղտկացուցիչ և յուսահատական:

Ըսել է, ա՛յսքան կրցաք հերքել. դուք որ հանապաղօրեայ այս նիւթով կը դբաղիք. ձեզի աններելի է, ինձի վրաս չիկայ, ես չիլեքանք մ'եմ որ կը նշանակէ amateur:

Իմ համբուս մէջ ձեզի հանդիպեցայ կ'ըսէք. կ'երեւակայեմ այն խրոխտ նալուածքը՝ զոր բարեհաճեցաք իմ վրաս դարձնելու ձեր հասկայաքայլ ընթացքին մէջ: Շարունակեցք միշտ: Ուստի ճամբուն վրայ զիս ձեր կարաւանին խառնուած տեսեր էք, մինչ ձեր երթվարը զուարթ խխնջիւններով այդ հեծելախմբին պարագլուխ (ձեր ըսածին համեմատ) սիզածեմ կողողանքով կը յառաջանար, լեզուագիտութեան չըջուն թանգարան մը իր վրան բեռնաւորուած:

Իմ հոն ներկայութիւնս զձեզ կը նեղէ և փոխանակ դո՛ւ ըլլալու որ ձեր գրութեանց անյաջողութիւնները մասնանիչ կ'ընեմ, զիս կը զրկէք շարունակ այն հմուտ վարժապետիս, որուն—փակադէի մէջ—մէկ հսկայ թարգմանութիւնը մօտերս Վենետիկոյ Միաբանութեան Մամուլը պիտի հրատարակէ,

(*) Ծ. Խ.—Այս յօդուածը խրկուած էր մեզ նախորդ շաբթուն, Մասիսի յունիս 7ի թիւով հրատարակուելու համար:

կը լսէ՞ք—ուր պիտի կարդաք ներդաշնակ քողեր, հայ դարձուածքներու և բառերու ընտիր գործածութիւններ :

Պիտի տեսնաք և համոզուիք ընդ միշտ թէ Ագլիականի ծովալճին վանական հայրերը տակաւին անփոփոխ պահած են իրենց նախորդներուն տաղաչափական կորովն, ուժն ու ներդաշնակութիւնը, այն ատեն՝ երբ դուք հեռուորաբար կ'աղաղակէիք թէ ո՞ւր են այն ջոջ գրիչներուն յաջորդները : Եւ այն անցեալ դարու աւագները իմ ու ձեր ներբողականին պէտք չունին . անոնք նախադգած հոգատարութեամբ իրենց կենդանութեանը նախ և առաջ սոսկալիթխար գրական կոթողներ կանգնեցին և ապա մեռան, որ է ըսել անմահացան :

Իսկ գալով մեր երկուքին մէջ առկա փոքրիկ հաշիւին, Տիլէթանթի հրաւերը սիրով ընդունեցէք և հաճէիք բանալ Հ. Մ. Զախճախի բառագիրքը : Հոն պիտի գտնաք ձեր վերջին հերքումներուն դէմ Զախճախի փաստեր և այս կերպ ձեզ խրատ թո՛ղ ըլլայ անգամ մըն ալ ձեռք չառնել զիտցած չի զիտցած մարդու տան դռան ջախջախը :

Ասել .— Բառը չատ մը նշանակութիւններու կերպարանափոխութիւն վերջը նաև հարցնել և յետոյ պատասխանել կը նշանակէ, ասոնցմէ ո՞րը պիտի ընդունիք :

Լրիւ բով .— Սխալ հասցէի զրկած եմ, կը գրէք . չեմ կարծեր, քանի որ Ա. ագ. Չորեքշաբթու ցուցահանդէսին Բ սիւնակին վարէն սկսեալ ԶՅրդ տողը և նախագասութիւնը ձեր գրութիւնն է . հակառակ պարագային ներդուլիւն :

Մարմին բառս միջանկեր էք . չի հասկընալնուդ անշուշտ . un corps lumineux ըսած ատեննիս—մեզի համար— մէջը դուրսը նայելու պէտք չի կայ, ձեզի համար խորհուրդ կուտամ ընելու որպէս զի brilliant բառին դէմ շողաւոր թարգմանէք, որ է ըսել շող արձակող ո՛չ թէ պայծառ :

Ածել զօղ .— Սխալ է, հայերէնի մէջ չիկայ, կ'աղաղակէք ինքնալստահութեամբ : Նոյն բառգիրքին մէջ :

Ածել ինչ զիւրի : Ածել, արկանել, ձգել

ի վերայ, stendere, ձգեաց զձեռն ի վերայ զլիսնց նցա :

Նոյն առնչութեամբ հայերէն լեզուի մէջ կայ usnեաւս ածել որու նշանակութիւնը մեծ բառգիրքին մէջ կրնաք գտնալ :

Un maitreին գալով, միշտ տարակուսանքի մէջ էի թէ ձեր թարգմանութեան մէջ maitre բառին համար արարիչ ըսելով ի՞նչ նշանակութիւն կուզէիք բացատրել : Վերջին յօդուածնիդ խնդիրը պարզեց : Կը գրէք skre մը =արարիչ մը : Ռ՜վ ըսաւ որ տէր մը միշտ արարիչ է : Un maitre ֆրանսերէնին մէջ ընդարձակ նշանակութիւն մը կը պարփակէ իր մէջը, որուն լոկ արարիչ բառը չի հասնիր համապատասխանելու, այլ պէտք է արարիչին կցել skre բառը իր ամբողջ նշանակութեամբ :

Արդէն ձեր յայտ ածեմ սխալ է—երկինք և բնութիւնը չէ որ ճանչցեր և ցոյց կուտան un maitre, այլ Ռասին է որ կը զուրցէ j'y reconnais—ի քեզ նախնիս . բանաստեղծն է որ կը զգայ, կը ճանչնայ այդ բնութեան ստեղծագործութեան մէջ տէր ու արարիչ մը՝ զոր չուզեր իսկոյն որոշել : Թերևս Հիւրմիւզ Գեոր.ը իր կրօնական սկզբունքներէն չի խոտորելու նպատակաւ շտապած ըլլայ կանխելու ֆրանսացի մատենագրոյն գաղափարը, որոշելով զՏէրն և անորոշ ձգելով զարարիչն : Ամէն պարագայի մէջ ձեր այդ ածեմ զոմն արարիչ միշտ որոնադիր մը յիշել կուտայ . կը ցաւիմ ըսելու, բայց այս այսպէս է :

Տաղաչափութեան վրայ ճառած ատեննիդ ձեր վահանը Գարագաշի վրայ կը տարածէք ինքզինքնիդ վտանգին ենթարկելով .—մեծ անձնանուիրութիւն : Ըսէ՞ք խնդրեմ սա հետեւեալը հայերէն է թէ օթէնթօթներուն լեզուն :

Ո արկ բզբել բզբոլ քո զայդ և կը ծիծաղիք ծաղրամիտ ծիծաղով Հիւրմիւզին : Օղակառոյցս յերկինս կախեաց տողին վրայ :

Իցիւ թէ ձեր ալ բանաստեղծական մտային խանձարուրը խաղաղական ներդաշնակութեանց մէջ օրօրուած ըլլար և չերթար գուհիկ հաւնոցին մէջ թափառէր, և այն տողին մէջ սագի ձայնէն աւելի իմանար սո-

խակին ներդաշնակ դալալիկը որ տերեւախիտ պուրակին խորը կը հնչէ, մերթ կը ճատ և կոկորդային, մերթ յարատեւ ու երկար սոյլով եւ կամ ելեւէջներու գեղգեղանք:

Որքան ճիշտ է լատինական առածը

De gustibus non est disputandum

Ձեր մի քանի տող թարգմանութեան ընթերցումէն կը հետեւցնեմ որ հայ չափին խնդիրը մասնագիտութիւն չէք ըրած: Նորէն — ի՞նչ կարելի է — իբր ժամանց — ինծի հրապարակօրէն յայտնէիք թէ սուղ ու երկար վանկերու վրայ ի՞նչ դադափար ունիք և ի՞նչ կերպ կ'ըմբռնէք, որոնց ընտիր գործածութեան վրայ հիմնուած է ամբողջ հայ չափը, որ առանց անոնց արձակ մ'է, ուրիշ ոչինչ:

Հայ չափին մէջ 4+3 վերջաւորութիւնը կարելի է. բայց իր տեղին, երբոր ինքնաբերաբար կուգայ և ոչ թէ քմահաճոյքի ու կամ անկարողութեան պատճառաւ: Ամբողջ Հոմերոսին մէջ 5—10 հատ օրինակի կը հանդպիր: Այլ ի՞նչ ներդաշնակութիւն, երանի՜ թէ յաճախ կրկնուած ըլլային այն տեսակ տողեր որոնցմէ մէկ քանին ձեր յիշդութեան մէջ արթնցնեմ:

Հոմերոս — Չոգաւ նստաւ բացէ նաւալն և ըզվըքինն արձակեաց:

Միլտոն — Ի նոյն վայր երանաւէտ, երգեա՛լ, Մուսա՛յր, երկնաւոր:

Ուկո Ֆոսիդո — Եւ, զնշխարս երկնի ու երկրի ալլակերպ է ժամանակ:

Ձեր ըրած հարցումը կը նմանի սա միւս հարցումին, թէ trifolium չորս տերեւ կրնա՞յ ունենայ: — Հարկաւ, բայց դաշտին մէջ 5—10 հատ կրնաք հանդպիր:

Դուք ալ երբ մեծ երգին նման 20000 տողեր գրէք ու կամ թարգմանէք, ուր տաղաչափական ներդաշնակութիւնը կարկաջաձայն հոսի, այն ատեն ձեզի ներելի պիտի ըլլայ ո՛չ թէ Յով լմնցնել, այլ եթէ կուղէք 1 վաճկով. բաւ է որ հոգին խօսի՛, հնչէ՛ և յուղէ՛: Եւ այն հաղարաւոր տողերուն հրաշալի հեռանկարին մէջ, իբր նմոյշ, թո՛ղ սա հետեւեալն ալ դստուի:

«Երկրայնոց և երկնայնոց և սանդարա՛մեւստականաց» (Բաբբարա):

Տեսաք որ ձեր երկվարը առողջ արիւնէ չէ սերած, այլ կանկառանցի՛մը ջրհանին ձախարակը դարձնողը, աչքերը կոյր, ակնակապիճներուն խորը խռովացած, վախ, տձեւ, անդամաղնական նիհարութեամբ չորքոտանին — առանց որոշելու կենդանաբանութեան ո՛ր ցեղին պատկանիլը, քանզի ո՛չ մէկուն պատիւ կը բերէ — որ օրն ի բուն իր tour vicieux լրացնելու տխուր ճակատագրին կը համակերպի: Կը դառնայ և կը դարձնէ ձգուռին աղմուկին հետ անվերջ ճանչիւններով, մեր մարդուած ականջին եւսթաքեան թմբուկը շարունակ կը վիրաւորէ անխնայ:

Եւ իբր վերջաբան, ձեր աշխարհաբարը մտիկ ըրէք և զուարճացէք, «ներեցէք ըսել ինձ թէ ոչ աշխարհաբար գիտէք ըստ բաւականին և ոչ գրաբար, գոնէ սանկ (ռամկ) ուստի ձեռնհաս չէիք մեր գործին — ո՞ր գործին, խալիի մեծ գործին — խառնուելու» այսինքն մեր բանակաւիճի մասնակցելու ըսել կուղէք Պ. Գուրգէն, ինչո՞ւ ոճերնիւ չէք զտեր մանրէաբանական քննութեամբ. այո՛, մանրէաբանական, ինչպէս են թուաբանական, զիցաբանական... բանութիւն — բան, բանի, բանիւ — ինչպէ՞ս մոռցեր էք: Նախնեաց վկայութեան ի՞նչ պէտք կայ գիմել: Բացէք Բիւզանդիոնի 2034 թիւը (չէ՛, ձեր ըսածին պէս աշխարհաբար կը հասկնա՞ք, կարգացէ՞ք) այն ձեր գրական շահատակութեանց կրկնսին մէջ, «Ժանտախտն ի Պէրլին»ի մէջ նկիտի գտնաք մանրէաբանական քննութիւնը:

Սաղի ձայնը իրաւի տղեղ է. և ասիկա զանազանելու համար ալ, Խտալիա երթալու պէտք չի կայ: Բայց կէտ մը կայ որ մութ կը մնայ և դոր չեմ կրնար հասկնալ. սա կը տորն է «ձեր վախճուկ լսելիքը ի՞նչպէս համ կ'առնէ» կը գրէք: Ի՞նչ, դուք լսելիքով համ կ'առնէք — տարօրինակ. — ըսել է գլխով չէ՞ք գրեր...:

Եւ այս կերպ կարգ մը ռամկական սանկ, մանկ, ատանկ, երկար բարակ բառերը և ոճերը ձեր հայերէնագիտութեան — մեղքերու չափ ալ երկայն — տկարութիւնը ցոյց կուտան:

Un maitre բացատրելու ջանալով նորանոր փոսերու մէջ կիցնաք և ծոփն իր

անկողինին մէջ կը բանտէք. ի՞նչ գիտնամ, ձեր գրէն ամէն բան կը յուսացուի, արեւը արշալոյսէն առաջ հանել, և կարգաւ, ինչպէս տղաքները դասարանէն: Երկու տարի վերջը սրբադրած եմ, կ'ըսէք, այս խարդախութիւն է եւն: Դեռ այս դրածներնէդ երկու տարի վերջը որքա՞ն սխալներ տակաւին պիտի սրբագրէք և ինքնազմայլ մասք ձեր գրելալերպը զլուս գործոց չի հիատէք և դադրիք տեսնալէ ձեր բոցավառ երեւակայութեամբ ա մէջ կողմ անանկութիւններ, սկսեալ Հիւրմիւղէն և Բագրատունիէն:

Մնանկութենէ բնաւ չի վախնալս կ'ենթադրէք, կորսնցնելիք բան մը չունենալուս համար:

Նոյն բանը չի պիտի կրնամ ըսել ձեզի համար դժբախտաբար, քանզի ձեր անանկութիւնը իմինիս նման ենթադրական չէ՛, այլ ձեզ կորսնցնել կուտայ այն վարկը, զոր կը վայելէք իբր հայկաբան:

ՏԻԼԷՍԱՆԹ

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

Վիգոր Հիւկոյի կեանքէն. — Մուրացկան մը որ... տաճար կը մուրայ. — Իպսեհի նկարագիրը. — Հետաքրքրական մանրավեպ մը:

Ակադեմական վերջին ընդունելութիւնը, որուն յօդուած մը նուիրած էր Մէրսէտէս Մասիսի նախորդ թիւով, այնչափ հետաքրքրութիւն չարժած էր որ ունկնդիրներու յատուկ տեղերէն շատերը վարձուած էին օտարապետ հարուստ ուղեւորներու կողմէ մինչեւ... հաղարական ֆրանզի:

Ակադեմականի մը ընտրութեան այս տեսչոտ յախառնութիւնը շատ ատեն կար որ չէր տեսնուած, և մինչև 1841 երթալու է անոր նմանը դառնելու համար:

Վիգոր Հիւկո շատ դժուարութիւններ կրեց իր ակադեմականի փառքին հասնելու համար: Այն ատեն աղքատ էր, դրամ չուէր որպէս զի անոր ուժով իր դործը քանցնէր: 1836ին անգամ մը Ակադեմիին ներ-

կայացաւ, և Տիւբէնի կողմէ արհամարհուեցաւ: Երկրորդ անգամ ներկայացաւ 1839ին, և Ակադեմիին իրմէ աւելի նախընտրեց Մօլէն: 1840ին դարձեալ ներկայացաւ, և այս անգամ ալ պարտուեցաւ, յաջողութիւնը ֆլուրանսի ձգելով:

Բայց չի յուսահատեցաւ երբեք, և վերջապէս անհուն ջանքերէ ետքը, 1841ին Ակադեմիին անգամ ընտրուեցաւ, բան մը որուն արդէն ամէն մարդ կը բաղձար:

Իր ընտրութեան չարթուն, Հիւկո Ակադեմիա կ'երթար, երբ անցորդ մը զայն նշմարելով, Բօն ատէ դ'Արի վրայ, ըսաւ իր քովը մուրացող կոյր աղքատի մը:

— Վիգոր Հիւկոն կ'անցնի կոր, շո՛ւտ դնաւ բան մը ուղէ: — Իրեն ընկերացող պղտրիկ աղջկան օգնութեամբ, կոյրը բանաստեղծին մօտեցաւ և ողորմութիւն հայցեց անկէ:

Հիւկո երկու սու տուաւ:

Կոյրը բանաստեղծին ուրտէնկօղէն բռնեց ուժգնօրէն:

— Բայց ի՞նչ կ'ուզես, ըսաւ նոր ակադեմականը:

— Ողորմութիւն:

— Զի տուի՞ մի...

— Ուրիշ բան է ուղածս...

— Ի՞նչ ուրեմն:

— Ոտանաւոր մը:

— Շա՛տ աղէկ, բայց հիմա ձգէ՛ ուրտէնկօղս:

Բանաստեղծը մեկնեցաւ և յաջորդ օրը ինք անձամբ մուրացիկին բերաւ հետեւեալ քառեակը.

Կոյր՝ Պելիգերի, Հոմերի նըման,

Պզտիկ աղջկան մ'ապաւինելով,

Իրեն հաց տուող ձեռքը գրութեան,

Թեեւ չի տեսներ ինք՝ կոյրը բռնաւ,

Բայց սիրոյն աչքէն չի վերհալիր յար:

Իպսէն հիւսնող էր: Բայց հիմակ աղէկ է. եթէ կայ բան մը սակայն, որ միշտ աղէկ չերթար, ան ալ Իպսէնի նկարագիրն է:

Ժորժ Պրանտէս, 1891ին, Նորվեկիացի նկարիչներու հետ, Գրիսթիանի մօտ, Սանտ-Վիքըն գտնուած ըլլալով, իմացաւ որ Իպսէն

պանդոկին մէջ մինակ է։ Ընկերներով փափաք յայտնեցին որ Իպսէն ալ իրենց ընթերցիւն մասնակցի։ Պրանտէն հեղինակը, առաջին անգամ այդ հրաւերը իմանալուն՝ մերժեց վայրենաբար։ Յետոյ հարցուց․

—Քանի՞ հրաւիրեալ պիտի ունենաք։

—Ի՞նչ հոգի։

—Ատանկ բազմութեան մը մէջ կարելի չէ որ ճաշեմ ես։

—Արուեստագէտներ են ամէնքն ալ, ըսաւ Պրանտէն․ անկող հիւրեր չկան։ Ձեր պանդոկին մէջ պիտի ճաշենք, ոչ հագուելու, ո՛չ ալ դուրս ելլելու պէտք ունիք։

Վերջապէս Իպսէն ընդունեց հրաւերին։ Սանտովիքնի ժողովուրդէն շատեր կը վազեն կուգան, իմանալով որ Իպսէն ներկայ պիտի ըլլայ այդ խնջոյքին։

Պրանտէն դժբաղդաբար չի կրցաւ մերժել զանոնք և Իպսէնի երթալով յայտարարեց թէ կին մը կը փափաքի իրենց սեղանին մասնակցի։

—Ձէ՛, պոռաց Իպսէն, ատ չեղաւ, տեսա՛ր...

—Ձուարթ ու տարօրինակ կին մըն է...

—Ո՛չ զուարթ, ո՛չ ալ տարօրինակ կիները կը սիրեմ ես...

—Կ'երեւայ թէ ատենօք անոր հորաքրոջը սիրահարը եղած էք...

—Լա՛ւ, գոչեց Նորվիկիացի թատերագուին, անանկ է նէ թող գայ։

Որոշուած օրը, Պրանտէն հագուած, սրգուած Իպսէնը առնելու եկաւ։ Այս վերջինը ապշահար՝ դիտեց զայն և բարկութեամբ․

—Հաղուած, ըսաւ, բայց ֆրաք չունիմ ես։

—Իբրտէնկօդով եկէ՛ք։

Իպսէն հարցուց․—Սա ո՛ր է, անցեալ օր կնոջ մը անունը տուիք, անիկա եկած է։

—Այո՛ և ուրիշ մէկ քանի կիներ ալ կան տակաւին։

—Խեղճ ես ի՞նչ ես, ըսաւ Իպսէն, ինքզինքէն բոլորովին եկած։ Քանի՞ հոգի պիտի ըլլաք որ։

—Քսան երկու։

—Չըլլար, ատ իմ գործիս չի դար։ Անկարելի բան է։

Շատ դժուարութիւններէ ետքը, Պրանտէն յաջողեցաւ Իպսէնը հետը տանիլ։ Բայց տեսնելու էիք այս վերջինին դէմքը, որուն ի տես, հրաւիրեալներէն շատեր հիասթափ եղան։ Ընթերցը շատ պաղ սկսաւ, այնպէս որ պատշաճ համարուեցաւ, ձուկէն անմիջապէս վերջը, շամբանեայ հանել և բաժակահառին արտասանութիւնը փութացնել։

Բաժակահառին ստալին պարբերութիւնը հաղիւ ըսուած էր, երբ Իպսէն ընդմիջեց ճառախօսը։ Պրանտէն սակայն, խոնարհաբար ներում խնդրելէ ետքը, շարունակեց, իր հիւրը արեւներուն ու երկինքի լուսաւորման ընթացքին սակայն։

—Աւասիկ ճառ մը, յարեց Իպսէն, որ կրնայ շատ մը առարկութիւններ վերցնել, բայց չեմ ուզեր այդ գործը իմ վրաս առնել։

—Առէ՛ք, ըսաւ միւսը, հաճոյք մը պիտի պատճառէք մեզի։

—Ձեմ ուզեք...

Պարոն մը որ սիրուն դերասանուհիի մը ըովը նստած էր ըսաւ․

—Քովիս տիկինը կը խնդրէ ինձմէ որպէսզի թատրոնի կիներուն կողմէ շնորհակալութիւն արտայայտեմ մեծն Իպսէնի, և ըսեմ իրեն թէ իր դերերը ամէնէն աւելի կամովին խաղացուածները եղած են, սկիզբէն ի վեր։

—Ես դեր մեր չեմ ճանչնար, ըսաւ հիւրը, անձեր կը ներկայացնեմ միայն․ ու բնաւ դերասանի կամ դերասանուհիի համար չէ՛ որ կ'աշխատիմ։

Նշանաւոր թատերագուին այդ ամէնէն ետքը, երբ կը մեկնէր սրահէն, չի մոռցաւ Պրանտէսի ականջն ի վար ըսելու․

—Շատ աղուոր էր երեկոյթը...

Տարօրինակ չե՞ն սա մեծ գրագէտները։

ՄԻՀՐ

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին հրամանով՝ Տ. Կարապետ և Տ. Վաղարշակ վարդապետները Նուիրակութեան ելեր են Ատանա, Մէլսին, Իսկէնտէրուն, Հալէպ, Այնթապ, Մաքա, Քիլիս եւ ուրիշ թեմեր ուր պիտի քննեն նաեւ աթոռապատկան իրաւանց հաշիւները։

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

ՄԱՍԿԱՆ ՎԱՐԳ.

Սասկան Վարգ.՝ գրականութեան մէջ, և ներսէս վարդապետ Դանիէլեան՝ հոգեւորականութեան մէջ, Կիլիկեցի այս պարզուկ եկեղեցականը համակրելի դէմք մըն է բաւին կրկնակ խմատով, ֆիզիքական ու բարոյական: Անկեղծ ու անշահախնդիր, որքան որ կրնայ ըլլալ եկեղեցական մը, անշուք ու խոնարհ երեւոյթի մը տակ կը պարտըկէ ու ժեղ սիրտ մը և տոկուն միտք մը: Առաջին տպաւորութիւնը զոր կը թողու զինքը տեսնողին վրայ՝ մեղամաղձիկ տրամութիւն մըն է որ կը կաթկթի իր նայուածքէն ու կը զգացուի իր խօսուածքին մէջ. բայց՝ մեղամաղձութիւն մը որ արուեստակալ չէ բնական, — վաճառի՝ դիտէք որ՝ ատոր ալ արուեստակալները ունինք, Միլվուայի «Տերեւաթախ»ին մեր մէջ թարգմանուելէն ի վեր որ երեւակայական հիւանդներուն թիւը չատցուց, — ու ճիշդ իր բնականութեանը համար ձգողական բան մը ունի: Զինքը մօտէն ճանչցողները կ'ըսեն թէ nostalgiaի մը հետեւանք է իր գլխահակ, ստուերոտ կերպարանքը ու թախտութիւնը: Թէև Պոլսոյ է'ն բարձրագոյն եկեղեցիին մէջ կը պաշտօնավարէ, — Իսկիւտարի Ս. Կարապետը, — բայց նախամեծար պիտի սեպէր հովիտներու խորը, բլուրներու ստորտը կորսուած գիւղական մատուռի մը երէցութիւնը, այնքան սիրահար է բնութեան, վայրի դալարիներուն ու դալարուող առուակներուն:

Օտար երկրի մը հայ գաղութին հոգեւոր հովուութեան հրաւիրուեցաւ անցեալները, բայց մերժեց. իր հիմակուան դաժնուած թաղային միջավայրը չատ քաղքենի դաժնող վարդապետ մը ինչպէ՞ս պիտի տոկար, օրինակի համար, Պոսթընի կամ Բրօվիտէնսի ժրտորին:

Իր եկեղեցական ուխտով և իր հոգեկան հակումով Կիլիկիոյ թեմին բոլորանուէր աշխարհեցականը. բանաստեղծի ու գրագէտի ճշմարիտ ներշնչումներ կուենայ, երբ իր ծննդավայրին վրայ գրիչ չարժէ: Իր «Կիլիկիան» Յուշերը», որոնք մոռցուած չեն, տեղագրութիւններէ աւելի հովուերգութիւններ էին: Իր քարոզները չեմ լսած ու իր գրաւոր քարոզներու հատորն ալ դեռ մամուլին չէ յանձնուած, բայց իր գրական կարողութիւնը Մեծ Պահքի կամ Աւագ Տօներու մեկնութիւններէն չէ՝ որ պէտք է դատել: Ըսել չեմ ուզեր թէ իր կրօնային յօդուածները տկար են, բայց անոնց մէջ իր հոգեւորականի հատկութիւնը միայն կը փայլի, մինչ իր նկարագրականներուն, աւանդավէպներուն, յուշերուն մէջ՝ իր սրտէն ու հոգիէն բան մը կը խառնէ:

Իր կերպարանքը...


Պարզասիրութեան մարմնաւորումն է:

Միջակ հասակ, նիհար կալմ, խարտեաչ մօրուք, յոգնած դէմք, ուշադրաւ երեւոյթ մը չեն ընծայեր իրեն. բայց իր տեսակցութեանց մէջ, երբ գլուխը բաց՝ նստի խօսելու, լայն ու խոհուն ճակատը, լեցուն ու լուրջ խօսուածքը կը կերպարանափոխեն, կը մեծցունեն զինքը աչքիդ:

Երիտասարդ հասակէն՝ այս եկեղեցականը պերճանքէ ու փայլէ խոշոր մըն է, ու այնպէ՞ս պիտի մնայ՝ իր հասուն տարիքին մէջ ալ, երբ ժամանակին հետ ու իր արժանիքով յառաջդիմէ՝ հոգեւորական դասակարգին մէջ:

Դ.Ա.ՄԷՐ

ԵՈՒԿԱՆՔԻՆ ՍՈՅԼԸ



Ամեն գիշեր երբ շոուս սոյլ մը երկար

Մութից մեջէն կը պոռպկայ,

Իր հետ սիրքս կը սպրդի յամբար.

Տարամ սարսուռ մը հսկայ:

Տխուր բաներ կ'ըսէ երբեմն ինձի ան,

Սեւ սեւ յուրեր կը գուծէ

Նւ իր սոյլը կարծես սուր հիշ մը լալկան

Հոգիս ցեա կը խուծէ:

Ու երբեմն ալ ան ծիծաղի պէս հնչուն

Կը հասնի իմ անկանջիս՝

Եւ կը ժպտիմ, առանց գիտնալու «իճշու»ն .

Տաւսամ յոյսեր կ'օտրեն զիս :

Բայց շատ անգամ այդ յոյսերը ,սնոսի
Բառերու պէս կը ցնդին ,
Աւելի խորն մըղելով զիս կաւոսի
Ու պատահի անդունդին :

Անոր համար սարսուռ մը զիս կը պատէ
Երբոր յանկարծ կը պոռթկայ
Երկար սոյլը սէւ հսկային պողպատէ ,
Որ միշտ կերբայ ու կուգայ

Եւ ես պատուել կուգեմ մուրը , որպէսզի
Դիտնամ , տեսնեմ ընդհուպ թէ ,
Հեռունե՞րէն , հեռունե՞րէն ան ինձի
Արդեօք ինչե՞ր կը բերէ . . .

Վ .

ՀԱՐՍԱՆԵՆԿԱՆ ՀԱՆԳԻՍՆԵՐ

Օրթագիւղի ծանօթ ընտանիքներէն Սի-
մոնովիչ Օր . Մառիի պատկազրութիւնը՝ Տի-
րան էֆ . Թէրզեանի հետ՝ հանդիսաւորապէս
կատարուեցաւ երկուշաբթի օրը Բերայի Ս .
Երրորդութիւն եկեղեցին , կնքահայրու-
թեամբ Ռօմանոս էֆ . Փորթուգալեանի : Ա-
րարողութեանց նախադահեց Տ . Հայեակ
Սրբազան շրջապատուած վարդապետներէ ու
քահանաներէ : Սըլանտիարի սրահներուն մէջ
ընդունուեցան շնորհաւորութիւնները , որոնք
գիշերը շարունակուեցան Թէրզեանց ընակա-
րանին մէջ , հարսանեկան սեղանի մը շուրջը :

Մեր խնդակցութիւնները կը յայտնենք
նորապսակ ամուլին :

* * *

Նոյնպէս մեր շնորհաւորութիւնները կ'ուղ-
ղենք Նիկոմիդիոյ պատուաւոր երիտասարդ-
ներէն Արրահամ էֆ . Կառաճեանի՝ իր ամուս-
նութեան առթիւ Օր . Թադուհի Դ . Կիւր-
ճեանի հետ (Կ . Պոլսեցի) : Վիճակին առաջ-
նորդ Տ . Ստեփաննոս Սրբազան նախադահեր
է պսակի արարողութեան , քաղքին Ս . Աստ-
ուածածին եկեղեցիին մէջ , իր շուրջն ունե-
նալով առաջն . Վոլսանորդը և Բէօթանիոյ
առաջնորդ Տ . Մկրտիչ Ծ . Վրդ . Աղաւունին :

Երկուշաբթի օրը Պէշիկթաշի եկեղեցիին
մէջ հանդիսաւորապէս տեղի ունեցաւ պսա-
կազրութիւնը Յարութիւն էֆ . Ա . Տէր-Յա-
կոբեանի՝ Օր . Զարուհի Յ . Նիքօթեանի հետ ,
կնքահայրութեամբ Մկրտիչ էֆ . Տէր Յակոբ-
եանի : Արարողութեանց նախադահեց Տ .
Դէորդ Կպիսկ . Երէցեան՝ իր շուրջն ունենա-
լով Տ . Բաբգէն և Գնէլ Վրդ . Ները ու բազ-
մաթիւ քահանաներ : Եկեղեցին շքեղապէս
լուսազարդուած էր և երկսեռ հրաւիրեալներու
բազմութեամբ լեցուած : Երէցեան Սրբազան
պարագային յարմար գեղեցիկ քարոզ մը խօ-
սեցաւ եւ իրրեւ մօտէն ծանօթ երկու ընտա-
նիքներուն՝ ի վեր հանեց անոնց բարեմաս-
նութիւններն ու այս խնամութեան պատշաճ
հանգամանքը :

Ի վերջոյ , եկեղեցական դասը և հարս-
նետորները հրաւիրուեցան Տէր-Յակոբեանց
ընակարանը ուր մեծարանքներ եղան : Նորա-
պսակ ամուլը ստացաւ շնորհաւորական բազ-
մաթիւ հեռագիրներ՝ Թէ՛ Պոլսէն և Թէ՛ դա-
ւառներէն , ինչպէս նաեւ գեղարուեստական
սիրուն ընծաներ՝ ազգականներու և բարե-
կամներու կողմէ :

Սոյն սոցերը գրողը՝ իբրեւ համակիր բա-
րեկամ մը՝ կը յայտնէ իր անկեղծ խնդակ-
ցութիւնները ու շնորհաւորութիւնները նա-
րապսակ Տ . և Տիկին Յ . Ա . Տէր-Յակոբեանի :
Ն . Ա . Օ .

Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն

Վիճակաւ Մխիթարեանց

Ի Բանկալիի

16 Յունիս , 1903

Վիճակաւ Մխիթարեանց Վարժարանի՝
Վկայականաց բաշխման հանդէսը պիտի կա-
տարուի ամսոյս 21ին , չարաթ օրը , կէս օրէն
2½ ժամ ետքը :

Կը խնդրենք որ Զեր ներկայութեամբը
բարեհաճիք պատուել և քաջալերել աշա-
կեւորները :

Հ . ԳԱՐԻԲԷՆ Վ . ՄԷՆԷՎԷՇԵԱՆ Վարժարանի
Հ . ԳՐԻԳՈՐԻՍ Վ . ԳԱԼԷՄԵԱՐԵԱՆ Մեծաւոր Վանատան

Արժանատի Կ . Ս . ԻԹԻԻԺԵԱՆ

Տպագրութիւն ՍՐՍԻՍԻՆ Օրագրի

ՀԱՅԻ ՄԱՐԻՄ

ՕՍՄԱՆԵԱՆ ՇԱՐԱՐԱԳՈՐԾ ԲԵՐԱՅՈՒ

Սոյն հանրածանօթ շաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաքիսըռի եւ թէ՛ իբրեւ շաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բաղմաթիւ յաճախորդները: Ամբան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր:

ՀԱՅԻ ՍԱՐԻՄ Օսմ. շաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան շաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առաջին ո՛չ միայն անոնց հալթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուաներու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա, Թօփճըլար ճատտէսի, Թ. 101:

2-30



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆԲ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԲ, ԱՐԿԱՍԻ



Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,667,667	Ֆրանք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ ու տոկոս	54,000,000	»
Երաշխաւորութեան գումար	122,000,000	»
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000	»

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Բարափին վրայ, Մաֆաւսան հին տեղը

Ընդհ. Քենիջ
Ա. ՀԻԻՐՄԻԻԶ

Ընդհ. Դորձակալ
ԹԵՈՏՈՐ ՌԵԲԵԷՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԴԸ ՆԻ ԻՐ ՅԵՂԸ, հեղ. Բրոն. Ա. Ալաբիս, Թարգմ. Մ. Կ. Նազիկեան հեծ. Սեպային առողջաբանութեան կարեւորագոյն գիտելիքներուն վրայ խօսող սոյն ժողովրդական գիրքը երկրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ Ե. Մատթէոսեան տպարանէն: Դին 5 շրջ: Վաճառման կեդրոնատեղին է Պալեմց գրատուն Կ. Պոլիս:

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ անգլիէրէնէն հայերէն, որ կը լրացնէ կարեւոր պէտք մը ուսանողներու, ճամբորդներու եւ առեւտրական գործով ղրաղողներու համար: Դին 8 շրջ: Կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով: Կեդրոնատեղի Սաքաեան տպարան, Կալաթա:

ՄԱՌՇ՝ ՎԵՌԱՆՏԱ, դաշնակահար Ահարոն էֆ. Մըսըրլեանի հեղինակած սոյն նուագատեղը կը ծախուի «Անտէլիպ» վաճառատունը՝ Պահէ-Գաբու եւ Ղալաթիա, Բօմէնտին կէր եւ Բրիսթօլիս ի Բերա, եւ Սկիւտար հեղինակին բնակարանը:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՋ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Դ Վ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Դ Վ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատուի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զինեւոյ: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով անելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութեան ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսալսաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ ռաւաբաժիններու բարդման (accumulation des bēnēfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համաժ, Բասաժ Բաքրբէր Օղլու

Մասնաձիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան, գործակալ Միհրան Էֆ. Դաւիթեան:

Դործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԶԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուղափէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբօսանեալ աբաղքման

Պալպալեան ամէն օր աղուայի ամէն տեւաակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Նրեքշաբթի մինչեւ ժամը 5: Դիչերուան ո եւ է ժամուան կաշիքի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած աղուաները: Յարեկները աղուայ քաշել տալու համար ուր վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղբատներուն ձեռք

“ AU TALON D'OR ” Օ ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶՍՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կադերու համար պատրաստուած

Կալաքա, Վոյվոսա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ չափու վրայ չինուելիք, — կ'արժէ անդամ մը այցելել սոյն վաճառատներ:

Կ. Յ. ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանանք վաճառականական պիտոյից, սպագրական գործերու պատրաստութեան հոգը.

Գին ԴԻԻՐԱՄԱՍՏԶԵԼԻ

Մաքուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 50% զեղչ.

Մանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն մասամբ:

Մանրամասնութեանց համար գիմի

Կ. Յ. ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ՍԱՄՍՈՆ

ՖԵՆԻԿՍ ԷՍԲԱՆԵՕԼ

Ա.ՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Հրդեհի եւ Կեանքի Ի ԲԱՐԻՁ


Դրամագլուխ՝ 63,228,000 Ֆրանք: Դրա հա-

տուն Ի Կ. Պոլիս՝ Բրէտի Լիօնէ

Դեր-Գործակալ Կ. Պոլսոյ ճիւղին

ՔԱՌԼՕ ԱՀՆԱՄԵԱՆ

Կալաքա, Վոյվոսա փողոց Թիւ 103



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սենեկայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, բախի ու օտիկի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ զիւրազորածելիւնը բոլորովն աշխարհի մէջ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

ՇԱՐԱՐԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԸՆԴՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿՍԼԱԹԱ

1. Սինկէր խան, Թիւէլին հետեւ.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԱԻՒՏԱՐ

Չարչը Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կատարել երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղուլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ . ԹԱԳ . ՍՈՍՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ . ԸՆԿ .

Հրդեհի եւ կեանքի (Ի Վիեննա)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒՔՍ ԼՈՒՐ ՏԷ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր . ԸՆԿ . քնդդեմ հրդեհի (Ի ՔԱՐԹԱՍԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Ծովային ապահովագր . ԸՆԿ . (Ի ՃԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է Ի Կ. Պոլիս, Քոնսթ Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Ք. ՖԵՐԱՏԵԱՆ

Դրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56

ՏՈՔԹՈՐ Լ. ՄԱԼԻԱՍԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ-ՄԱՆԿԱԲԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց

(Վկայեալ Բաշիզէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հիւանդութիւններ, կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ՝ վերջին կատարեալ գործեալ դրութիւններով:

Բարիզի, Նանսիի հիւանդանոցներուն մէջ երկար տարիներ օգնական-բժիշկի (հիքսթերն) պաշտօնը վարած ըլլալով, գործնական ու փորձառական երկար ուսումնասիրութիւններ ընելէ վերջ, այս անգամ Կ. Պոլիս եկած եւ հաստատուած է Բերա, Թարլա Պաշը, Թիւ 136:

Ծանօթ. — Հիւանդներ կ'ընդունին ամէն օր կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ, ժամը 1-4 (Ը. Ն.): Երեքշաբթի օրերը միեւնոյն ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հիւանդները:

18-20

ԴԱՇՆԱԿԻ ԴԱՍ

Դաշնակահար օրիորդ մը, որ խիստ լաւ մէթոտ մը ունի նորափայտները մարդկու դաշնակահարութեան, կը փափագի այցելութեամբ դաս տալ տուներու մէջ: Դիմել՝ Մասիսի խմբագրութեան:

HOTEL «FERAH»

ՕԹԷԼ «ՖԷՐԱՆ»,

Բրինքիւրօ, Նիդամի պողոտային վրայ, ծովաշայեաց, ընդարձակ պարտէզներու մէջ: Վարձակալը, Աւաքել Տերեկեան որ այնքան խնամօք կը վարէ Պոլիս Սուլթան Համամի հանրաժանօթ նախկին Գասպար ճաշարանը, յանձն առած է նիւթական ամէն զոհողութիւններ ընել՝ իր բաղմաթիւ յաճախորդներուն հանգստութեանը համար:

Գիները չափաւոր. լաւ եւ մաքուր սնունդ. պանդոկը բաց է Եւրոպական մայիս մէկէն սկսեալ:

7-10

ՏՈՔԹ. Ն. ՄԱՍԻՍ (Բերա, Թագսիմ փողոց, ք. 15) Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ, կը դարմանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով, ստամոքսի, աղեաց, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային սկիզբութիւնները, դաղձիական ախտերը (սիֆիլիս եւ այլն) եւ մորթի հիւանդութիւնները: Հիւանդ կ'ընդունին ամէն օր կէս օրէ վերջը: